ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 24-ին չորսօրյա այցելությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Ռուս Ուղղափառ Եկեղեցու Արտաքին հարաբերությունների բաժնի երկու աշխատակիցներ՝ Ալեքսանդր սարկավագ Վասյուտինը՝ ԵԵԿ Կենտրոնական Կոմիտեի անդամ, և դոկտոր Սերգեյ Գովորունը՝ ԵՀԽ «Հավատք և կարգ» հանձնախմբի անդամ և Մոսկվայի Հոգևոր Ակադեմիայի դասախոս:

Նոյեմբերի 25-ին և 27-ին Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում նրանք հանդիպումներ ունեցան բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի հետ և քննարկեցին մի շարք հարցեր՝ կապված Հայ և Ռուս Եկեղեցիների միջև երկխոսությունները վերսկսելուն, որոնց առաջին փուլը տեղի էր ունեցել 2000 և 2001 թվականներին*:

Քննարկումների ընթացքում ճշտվեցին հովվական հարցերի շուրջ առաջիկա երկխոսության թեմաները: Քննարկումներին նաև մասնակցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբեղ. Մանուկյանը և ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը:

Նոյեմբերի 28-ի առավոտյան նրանց ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին իրենց այցելության ընթացքում հյուրերը եղան նաև Մատենադարանում, Ծիծեռնակաբերդում, Գեղարդա վանքում, ինչպես հանդիպումներ ունեցան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաների հետ:

ՀՈՎԱԿԻՄ ԱԲԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

---

* Այս մասին տե՛ս նաև՝ **Գայանե Այնբանյան**, Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիների միջև ուղղակի բանակցություններն իրականություն են դառնում, «Էջմիածին», 2000 թ., No Է, էջ 107 -109:

Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիների ներկայացուցիչների միջև առաջին գործնական երկխոսությունը տեղի էր ունեցել 2001 թ. փետրվարի 12-ից-16-ը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հրնթացս որի արծարծվել էին հետևյալ թեմաները.

- Եկեղեցի և պետություն; Քրիստոնեական էթիկա և աշխարհական իրավունք; հանցագործություն, պատիժ, ուղղում.
- Եկեղեցի և ազգ; էթնիկական գործոնը; աշխարհիկ գիտություն, մշակույթ, կրթություն.
- Բարոյականության հարցեր; առողջություն, կենսաէթիկայի և բնապահպանության հիմնախնդիրներ.
- Եկեղեցի և բաղաքականություն; աշխատանքը և նրա պտուղները, սեփականություն; պատերազմ և խաղաղություն; միջազգային հարաբերություններ: